ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ ՇԵՆԻԿԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆ

Հասցե՝գ.Շենիկ Մանուկ Մելքոնյան 1
Էլ.հասցե՝ shenik.armavir@mta.gov.am
Հեռ. 093-07-28-90

ԹԻՎ 20

11.___02.___2020թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ
ՊԱՐՈՆ՝ Հ.ՄԱԹԵՎՈՍՅԱՆԻՆ

ՀԱՐԳԱՐԺԱՆ ՊԱՐՈՆ ՄԱՐԶՊԵՏ

Կից ուղարկվում է ՀՀ Արմավիրի մարզի Շենիկի գյուղական համայնքի ղեկավարի 2019թվականի տարեկան հաշվետվությունը:

ՇԵՆԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Կ.ՄԻՆԱՍՅԱՆ

Կատ.՝ Ս.Կիրակոսյան

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՇԵՆԻԿԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Կ.ՄԻՆԱՍՅԱՆԻ 2019Թ. ՏԱՐԵԿԱՆ ԿԱՏԱՐԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Մասնակցությամբ՝ Հայաստանի Հանրապետության Ամավիրի մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչության ՏԻ համայնքային ծառայության հարցերի բաժնի պետ՝ Գոռ Հովհաննիսյանի, համայնքի ավագանու և 24 բնակիչների.

11.02.2020Թ.

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Շենիկի գյուղական համայնքի ղեկավարը ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, նրանից բխող օրենսդրական և ենթաօրենսդրական ակտերով, »Տեղական ինքնակառավարման մասին«, »Իրավական ակտերի մասին«, ՀՀ օրենքներով, համայնքի ղեկավարի աշխատակազմի, ավագանու և գյուղապետարանի ենթակայության տակ գտնվող հիմնարկների աշխատակիցների միջոցով իրականացրել է իրեն վերապահված իրավասությունների շրջանակներում՝ իր լիազորությունները:
2019թ. գյուղապետարանի աշխատանքային ծրագրի հիմքում՝ դրված են եղել համայնքի սոցիալտնտեսական զարգացման գերակա ուղությունները:
Այս խնդիրների լուծման համար կարևորագույն պայման է հանդիսացել Արմավիրի մարզպետի, մարզպետարանի աշխատակազմի և համայնքի ավագանու ամենօրյա հոգատար վերաբերմունքը և համայնքի խնդիրների լուծմանն աջակից լինելու պատրաստակամությունը, որի արդյունքում արձանագրվել է որոշակի հաջողություններ, որոնք ըստ բնագավառների ներկայացնում եմ Ձեզ:

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ

Համայնքում ուշադրության կենտրոնում է եղել մշակակաբույսերի մշակման, աճեցված բերքի իրացման աշխատանքները, վնասատուների դեմ պայքարի միջոցառումները:

<<ՍՊԱՅԿԱ>> ընկերության կողմից հիմնվել է 190.0հա խաղողի, 35.0հա սալորի, 42.0հա գիլասի և 12.0հա ծիրանի ինտենսիվ այգիներ: Ստեղծվել է մոտ 30 մշտական և բազմաթիվ սեզոնային աշխատատեղ:
Համայնքի բնակիչների կողմից 2019թվականին հիմնվել է 11.85հա պտղատու այգի:

<<ՇԵՆ>> բարեգործական կազմակերպության կողմից ևս շարունակվում է օրգանական այգիների ծավալի ավելացում, ինչպես նաև ուսուցողական կենտրոնի կողմից տարբեր այգեգործների մասնագիտական հմտություններ են տրամադրվում:
Նրանց կողմից տեղադրվել է նաև արևային կայան իրենց փոքրիկ սառնարանային տնտեսությունը աշխատացնելու համար:

Այնտեղ այցելում են աշխարհի տարբեր կողմերից եկած անձինք՝ դոնորներ և տուրիստներ, որոնց հետ համայնքի բնակիչների շփումը մեծացնում է գիտելիքների պաշարը:

<<ԱԼ-ԱՐԴԱԼՅԱՀ ԳՐՈՒՊ>>Ընկերության կողմից (օգտագործվող),մշակվող 30.0հա հողատարածքներում աշխատում են համայնքի 20 բնակիչներ: Նշված ընկերությունը զբաղվում է գյուղատնտեսական մշակաբույսերի մշակմամբ, ինչպես նաև այգեգործությամբ և նախապատրաստական աշխատանքներ են կատարվում գործարաններ հիմնելու ուղղությամբ:

Ավելանում են այգեգործությամբ և անասնապահությամբ զբաղվող անձանց թվաքանակը, ավելացել են ֆերմերային տնտեսությունների քանակը:

2019թ-ին համայնքում առկա է 221.70հա խաղողի և 328.40հա պտղատու այգիներ, այն աճի տեմպեր է արձանագրել:

Համայնքի բնակչի կողմից ստեղծված չրի արտադրամասը ավելի է ընդլայնել իր տարածքը և ընդունման ծավալը, այնտեղ աշխատում են մոտ 15 աշխատողներ:

ՀՀ ՏՋՆ,ՏՋՀ հիմնադրամի և համայնքի համատեղ ֆինանսավորմամբ /35 մլն. ՀՀ դրամ/ կառուցվում է համայնքի ոռոգման ներքին ցանցի ջրագծի միացումը 2.5 կմ հեռավորությամբ գտնվող մայր ջրանցքի հետ, որով բնակելի տարածքը և մշակվող հողերի ոռոգումը չեն խանգարի իրար:

ԲԱՐԵԿԱՐԳՄԱՆ ԵՎ ԿՈՄՈՒՆԱԼ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ

Համայնքի կենտրոնում գործում է գրուցարան, որտեղ իրենց հանգիստն են անցկացնում համայնքի բնակիչները, քիչ հեռվում կառուցված է մանկական խաղահրապարակ, որտեղ երեխաները անցկացնում են իրենց առօրյան:

Գործում են երկու սպասարկահներ համայնքի տարբեր ճանապարհներին:

Ավելացվել է գիշերային լուսատու լապտերների քանակը, բարեկարգվել է փողոցները:
Համայնքի ազգաբանակչությունը կամավոր ձևով բարեկարգում են դաշտերի և գյուղամիջյան ճանապարհները:

ՀՈՂԱՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՈՂՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ

Ամենօրյա աշխատանք է տարվում հողօգտագործողների հետ հողի հարկի, գույքահարկի գծով գոյացած ապառքների հավաքագրման գործում:
Սիստեմատիկ տեղեկատվություն է ներկայացվում անշարժ գույքի կադաստրի տարածքային ստորաբաժանում՝ սեփականության իրավունքի գրանցման վկայականներում ճշտումներ կատարելու վերաբերյալ:

ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ, ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ, ՍՊՈՐՏԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ

Շենիկ համայնքում գործում է 1 միջնակարգ դպրոց 178 աշակերտներով:
Գործում է 1 մանկապարտեզ 2 խմբով:
Կրթության որոկը գտնվում է բարձր մակարդակի վրա:
Գործում է գրադարան, այն որոշ չափով վերանորոգված և կահավորված է, ունի 5150կտոր գրականություն և պարբերաբար ավելացվում է քանակը:

<<Հայաստանի մանուկներ>> հիմնադրամի և գյուղապետարանի համատեղ ջանքերով կահավորվել է մանկապարտեզի մի խմբասենյակ տմբողջությամբ, ստեղծելով հեքիաթային լուսավոր անկյուն:
Տարբեր կազմակերպություններ աջակցում են համայնքին բազմաթիվ խնդիրներում՝ՀՀ ՏՋՀ,<<Հայաստանի մանուկներ>> հիմնադրամ և այլն:

Բուժ.ամբուլատորիան կահավորված է սարքավորումներով, համայնքի բնակչության բուժ. սպասարկումը իրականացվում է ժամանակին և անթերի, նախատեսվում է ավելի ընդլայնել բուժամբուլատորիայի տարածքը: Ցանկալի կլիներ համայնքն ունենար առանձին բուժամբուլատորիա:

Համայնքում ուշադրության կենտրոնում են գտնվում զոհված ազատամարտիկների և սոցիալապես անապահով անձանց ընտանիքները, որոնց տրվում է նաև ֆինանսական օգնություն:

Ազգաբնակչության նկատմամբ իրականացվում է ճիշտ և ժամանակին հաշվառում, մշտապես ընթացք է տրվում բնակչության հուզող առօրյա խնդիրներին:

Հայաստանի Հանրապետության պաշտպանության բնագավառում ժամանակին և անթերի իրականացվում է զորակոչը, բնակչության շրջանում իրականացվում է ռազմահայրենասիրական դաստիարակություն:

Համայնքում գործում է շուրջօրյա ջրամատակարարում:

Համայնքը գազաֆիկացված է և աստիճանաբար ավելանում են բաժանորդների քանակը:
Համայնքում գործում է մեկ չորանոց, երեք ՀԷԿ - էր և մեկ արևային կայան, որտեղ աշխատում են համայնքի բնակիչներից:
Հաշվետու ժամանակահատվածում համայնքում դատապարտված անձինք չեն եղել:
Համայնքում գործում է ֆուտբոլի և պարի խմբակներ, ցանկանում ենք ստեղծել տարբեր այլ ոլորտների խմբակներ:

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ

2019թ. տարեկան կտրվածքով հավաքագրվել է եկամուտներ՝

հազար դրամ

հ/հ	Եկամուտների անվանումը	պլան	փաստացի	Կատարողական %
1.	Հողի հարկ	11253.0	6022.2	53.5
2.	Գույքահարկ	2400.0	2661.2	110.9
3.	Տեղական տուրք	50.0	20.0	40
4.	Հողի վարձավճար	1200.0	1380.3	115
5.	Այլ մուտք /տեղական վճար սուբսիդիա/ ծնող վճար	900.0	919.4	102.2
6.	Աղբահանում	200.0	103.9	52
7.	Դոտացիա	10899.0	10899.0	100
8.	Այլ դոտացիա			
9.	Ինքնակամ կառույցի օրինականացման վճար և մրցույթի մասնակցության վճար		216.6	
10.	Այլ մուտք			
11.	Ընդամենը սեփական եկամուտներ	16003.0	11323.6	70.8
	ԸՆԴԱՄԵՆԸ վ/Բ	26902.0	22222.6	82.6
1	Ֆ/Բ ազատ մնացորդ	2132.3	2132.3	
2	Հողի օտարում	6500.0	6829.1	105.1
	ԸՆԴԱՄԵՆԸ	35534.3	31184.0	87.8

2019թ. տարեկան կտրվածքով կատարվել է ծախսեր հետևյալ ուղղություններով՝

հազար դրամ

	ԾԱԽՍԵՐԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	2019 ՏԱՐԵԿԱՆ		
		ՊԼԱՆ	ՓԱՍՏԱՑԻ	ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ %
1.	Տեղական ինքնակառավարում	12662.0	12233.7	96.6
2.	Մանկապարտեզ ՀՈԱԿ	6300.0	6299.9	100
3.	Աղբահանություն	830.0	830.0	100
4.	Անասնաբուժական ծախս	480.0	480.0	100
5.	Գյուղատնտեսություն-հակակարկտային կայանի գազի ծախս	150.0	150.0	100

6.	Բնակարանային տնտեսություն	160.0	158.7	99.2
7.	Սոց.օգնություն	500.0	500.0	100
8.	Գրադարան	900.0	893.7	99.2
9.	Մշակույթի տուն	720.0	713.0	99.0
10.	Ոռոգում	4200.0	4200.0	100
11.	ԸՆԴԱՄԵՆԸ Վ/Բ	26902.0	26459.0	98.4
12.	Ֆ/Բ	8632.3	506.0	5.9
13.	ԸՆԴԱՄԵՆԸ	35534.3	26965.0	75.9

2019թվականի ընթացքում համայնքի ավագանին գումարել է 12 նիստ, որտեղ քննարկվել են համայնքի խնդիրներին վերաբերվող տարբեր բնույթի հարցեր, և կայացվել որոշումներ:
Համայնքի ղեկավարի 2019թ. տարեկան կատարած աշխատանքները գնահատվեց բավարար:

ՀԱՄԱՅՆՔԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

Չնայած, համայնքի բյուջեով նախատեսված է սոցիալ-տնտեսական զարգացման և որոշ ուղություններով իրականացված միջոցառումներ, սակայն կան հիմնախնդիրներ, որոնց լուծումը հնարավոր չէ իրականացնել միայն համայնքի միջոցներով:

ԱՌԱՋՆԱՅԻՆ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՄԱՐ ԳԼԽԱՎՈՐ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԻՑ Է

Համայնքում կան չլուծված մի շարք խնդիրներ՝

1. Վերակառուցման խիստ անհրաժեշտություն ունի մանկապարտեզի շենքը:
2. Համայնքի ներքին ճանապարհների ասֆալտապատում մոտ 3 կմ-ի չափով:
3. Մարզահրապարակի կառուցում, հանգստյան գոտու ստեղծման հետ զուգահեռ /կա նախնական համաձայնություն COAF- ի և <<ՇԵՆ>> բարեգործական կազմակերպությունների հետ:
4. Գյուղապետարանի վարչական շենքի վերանորոգում:
5. Փոքր և միջին ջրամբարների կառուցման նպատակային վայրերի հետազոտություն:
6. Դպրոցի տարածքի ցանկապատում և բարեկարգում:

ՇԵՆԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Կ.ՄԻՆԱՍՅԱՆ